րունակեցին անընդհատ մինչեւ Ս. Սահակի կաթողիկոսութեան օրերը, այնքան խորապէս արմատացեր էին կղերին և ժողովրդեան մէջ, որ մինչեւ իսկ սուրբ հայրապետը, իր բոլոր եռանդով և աստուածային հոգւով, իր երկաթի կամքով ու ճիգերով, անկարող եղաւ անմիջապէս արմատախիլ ընել զանոնք, ինչպէս կարելի է գուշակել իր կանոններէն: Ան ստիպուեցաւ ամէն կարելի միջոցներ ձեռք առնել, սաստիկ ու դառն յանդիմանութիւններ տեղալ անոնց գլխուն, եկեղեցական խիստ պատուհասներ սպառնալ՝ անոնց որ զանցառու գտնուէին իր հրամաններուն դէմ: Դժբախտաբար այս բարոյական կեղը ճարակեր էր ոչ միայն աշխարհիկ մարդոց մէջ, այլ նոյն իսկ կղերական դասին, ուսկից զերծ չէին մինչեւ անգամ եպիսկոպոսները, որոնք գեղծանելով իրենց աստիճանին իշխանութեամբ, և օգտուելով մանաւանդ նախորդ հոգեւոր պետերուն թոյլ և աղիկամի վարչութենէն, կը շարունակէին իրենց ապօրինի գործերը, առանց խորհելու բնաւ, թէ ա՛յլ եւս կաթողիկոսական աթոռին վրայ՝ Ջաւէն մը կամ Ասպուրակէս մը չէր որ բազմած էր, այլ Ս. Սահակ Պարթեւ մը, Լուսաւորչի թոռան թոռնորդին, Ս. Ներսէսի հարազատ զաւակը, աստուածային հոգւով և նախանձով վառուած հայրապետ մը, որ Քրիստոսի հետ կ'ըսէր ու կը կրկնէր. «Նախանձ տան քո կերիցէ զիս»:

1. — Ան իր կանոններուն առաջին գլուխը կը նուիրէ եպիսկոպոսներուն, զորս «այցելու և հասարակաց հայր[1]» կը կոչէ. անոնք դժբախտաբար իրենց բարձր աստիճանին պարտականութեանց անգիտակ և անփոյթ, յաճախ քահանայ կը ձեռնադրէին անարժան, մոլի և ագէտ անձեր, և նոյն իսկ գռեհիկ զինուորներ, որոնք կա՛մ իրենց ազգականներ էին, և կա՛մ կրնային նիւթական շահերու և միջոցներու աղբիւրներ հայթայթել իրենց, այնպիսիներ վերջապէս՝ որ ո՛չ քահանայական աստիճանին յարգը գիտէին, և ո՛չ ալ Ս. Խորհուրդներուն տարրական գիտութիւնն ունէին: Անոնց դէմ է՝ որ Ս. Սահակ կը բարձրացնէ ուժգին իր ձայնը, կը բողոքէ և կ'արգիլէ խստիւ, «Մի՛ ոք զայսպիսի տեսչութիւնս՝ զինուորաց կամ ագիտաց հաւատասցէ, և մի՛ մերձաւորաց իւրոց՝ շնորհուկս ինչ առնելով[2]»: Սակայն այդ մեղմ ու թեթեւ յանդիմանութեամբ գոհ չըլլալով, որ անկարող էր թերեւս ցնցելու և զգաստացնելու այն սալացած սրտերը, աւելի խիստ ու սաստող շունչ մը կու տայ իր խօսքերուն, կշտամբելով զիրենք, թէ «փարիք զտոհմային զազգականօք, պէսպէս հնարելով հնարս՝ զի զիրգ և փափուկ առնիցէք, և առաւելատացութեամբն զեղուցուք զտունսն[3]»: Կը պատուիրէ անոնց, որ հրեշտակակրօն վարք մ'ունենան իրենց սուրբ աստիճանին վայել ու յարմար, կատարեն առանց աչառութեան իրենց պաշտօնը, պարկեշտ ու պատուիրանապահ կեանք մ'ունենան՝ ի շինութիւն իրենց ստորակարգ պաշտօնեաներուն, հեռի կաշառքէ ու ընչասիրութենէ: Մինչ «դուք, կ'աւելցնէ, յընչասիրութիւնս և ի կաշառս կործանիք, և զգարշելիսն և զպատուիրանազանցսն և զզինուորսն և զագէտսն հաւատարիմ համարիք ի գործ սպասաւորութեան եկեղեցւոյ, և ջոլիրս եւս յաճախեալս տողէք զկնի ձեր զմերձաւորացն անուանելոց[4]»: Եպիսկոպոսներուն ո՛չ նուազ կարեւոր և փափուկ պարտականութիւն մ'էր դարձեալ, հաւատացեալներէն իրենց յանձնուած գանձերն ու դրամները պահել ամենայն հաւատարմութեամբ իբր սրբազան աւանդ և հսկել խղճով որ եկեղեցիներուն, վանքերուն և աղքատներուն կարեւոր պէտքերուն միայն գործածուէին, մինչ իրենք յաճախ անձնական վայելքներուն կամ հաճոյքներուն համար կը վատնէին այն դրամները և կամ իրենց ազգականներուն

1. Կանոնք Ս. Սահակայ. Ա. էջ 71։
2. Անդ. Բ. էջ 72։
3. Անդ. էջ 74։
4. Անդ. Ե. էջ 77–78։